ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

20-ը դեկտեմբերի 2023թ.

Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի շնորհավորական ուղերձը

ԱԱԾ աշխատողի օրվա կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրվա կապակցությամբ շնորհավորում եմ համակարգի բոլոր ծառայողներին և ԱԱԾ սահմանապահ զորքերին:

Անվտանգության մարմինների կատարած աշխատանքը հանրության մեջ հաճախ աննկատելի է, չբարձրաձայնվող, սակայն կարևոր ու անգնահատելի: Մեր երկրի ամբողջականության ու ժողովրդի անվտանգության առաջին երաշխավորը համակարգի աշխատողներն ու սահմանապահ զորքերն են, ովքեր բարձր պատրաստվածությամբ, զգոն և հմուտ ծառայությամբ արագորեն բացահայտում ու կանխում են յուրաքանչյուր սպառնալիք:

Բազում հաջողված գործողություններին զուգահեռ, ցավոք, ծառայություն իրականացնելիս և պատերազմներում մարտնչելիս անվտանգության մարմինները ունեցել են ուժեղ ու նվիրյալ ծառայակիցների կորուստներ: Խորին հարգանքով պետք է հիշենք և փառավորենք նրանց սխրանքները, անցած ուղին ու նվիրումը հայրենիքին:

ՀՀ ազգային անվտանգության մարմինների հարգելի՛ աշխատակիցներ.

Խաղաղ ու անվտանգ երկիր ունենալու հարցում մեր ժողովուրդը մեծապես ապավինում է ձեր գործունեությանը: Կրկին շնորհավորում եմ մասնագիտական օրվա կապակցությամբ և մաղթում քաջառողջություն, անվտանգ ու արդյունավետ ծառայություն և հաջողություններ ձեզ վստահված պատասխանատու գործում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ